

Քոլեջի պատմություն

ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N 615 – Ն որոշմամբ ՀՀ ոստիկանության ակադեմիա պետական հիմնարկը վերակազմակերպվեց «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության, որի կառուցվածքում, ի թիվս այլ ուսումնական ստորաբաժանունների, ստեղծվեց նաև քոլեջը:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի գործունեության նպատակը ոստիկանական միջին մասնագիտական ծրագրի իրականացման ապահովումն է: ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջում կազմակերպվող ու իրականացվող միջին մասնագիտական կրթության չափորոշիչներն ամրագրված են ՀՀ ԿԳՆ 27.12.2010 1740 – Ն հրամանում, որի համաձայն ոստիկանական միջին մասնագիտական կրթության ծրագիրը յուրացրած շրջանավարտներին տրվում է «Ոստիկանական գործ» մասնագիտությամբ՝ «Ոստիկանության սպա» որակավորում:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 23 հուլիսի 2019 թ. N 380-Ն հրամանով հաստատված չափորոշիչի համաձայն՝ քոլեջում միջին մասնագիտական կրթության 1032.01.5 «Ոստիկանական գործ» մասնագիտությամբ 1032.01.01.5 «Ոստիկանության-սպա» որակավորման մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները՝

- 1) հետաքննության տեսուչ,
- 2) պարեկային տեսուչ,
- 3) համայնքային ոստիկանության և ընտանիքում բռնության կանխարգելման տեսուչ:

Ոստիկանական միջին մասնագիտական կրթական ծրագիրն իրականացվում է մոդուլային ձևով, որի ընթացքում շեշտը դրվում է սովորողների մոտ գործնական կարողությունների ու հմտությունների ձևավորման վրա: Ուսուցման իրականացման համար քոլեջն ապահովված է անհրաժեշտ լսարանային ֆոնդով, համակարգչային լսարաններով, գրադարանով, ընթերցասրահով, ֆիզիկական և մարտական պատրաստականության պատշաճ մակարդակ ապահովող սպորտային դահլիճներով, սպորտային հրապարակով, էլեկտրոնային և մարտական հրաձգարանով:

Քոլեջը, համարվելով ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կառուցվածքային ստորաբաժանում, իր հերթին բաղկացած է մի շարք ստորաբաժանումներից: Քոլեջի կազմի մեջ են մտնում ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետը և հինգ ամբիոններ՝

1. լեզուների,
2. հասարակագիտական առարկաների և հոգեբանության,
3. տեխնիկական առարկաների,
4. մարտական և ֆիզիկական պատրաստականության
5. ոստիկանության տակտիկական պատրաստականության ամբիոն:

Քոլեջում ընդունելությունն իրականացվում է մրցութային հիմունքներով՝ երեք ստուգումների հիման վրա.

1. մասնագիտական պիտանելիության համապատասխանության համալիր ստուգում /թեստավորում համակարգչի միջոցով/
2. հայոց լեզվի իմացության ստուգում /թեստավորում համակարգչի միջոցով/
3. ֆիզիկական պատրաստականության ստուգում:

Քոլեջում դասավանդում են մասնագիտական փորձ, գիտական աստիճան ունեցող մասնագետներ: Քոլեջի դասախոսները պարբերաբար մասնակցում են ՀՀ բուհերում կազմակերպվող գիտական և ոչ գործնական սեմինարներին ու կոնֆերանսներին, սպորտային, մշակութային և այլ միջոցառումների:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջում առաջին ընդունելությունը տեղի է ունեցել 2011թ. օգոստոսին: Առաջին կուրս են ընդունվել թվով 64 սովորող: 2013թ. քոլեջն ունեցավ թվով 59 առաջին շրջանավարտներ: Մինչ օրս քոլեջն ունեցել է 357 շրջանավարտ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներով, «ՀՀ ոստիկանության ակադեմիա» պետական հիմնարկը վերակազմակերպելու և «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումով, ՀՀ ոստիկանության պետի հրամաններով, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ներքին իրավական ակտերով և այլ իրավական ակտերով: